



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ**  
**ՐԻՄՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**

**Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com**



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԻՐԸՆԿԱԼՈՒԹԵԱՄԲ**  
**Ս. ՂԵՒՆՆՆԵԱՆՑ ՔԱՅԱՆԱՅԻՑ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՄԱԳՈՒՄԱՐ**

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝**

**ՅԻՄՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄԵԼԵԱՆ, ԱՐԵՄՏԵԱՆ**  
**ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՄԵՐՈՒ ՅՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ ԴԱՍՈՒՆ**

Յաւատքի, հայրենիքի, խղճի ազատութեան եւ մարդու իրաւունքի պաշտպանութեան համար, առաւել քան հազար հինգ հարիւր տարիներ առաջ, մեր նախնիք՝ խրոխտաբար ապստամբութեան դրօշ պարզած հոգեւորական եւ աշխարհական ղեկավարներ գերիզօր պարսկական կայսրութեան դէմ ծառացան, պաշտպանելու համար հայրենի սրբազան հողը, անաղարտ պահելու հայոց առաքելական լոյս հաւատքը, հայրենեաց անկախութիւնն ու ազգային սրբութիւններն ու աւանդութիւնները:

Ս. Վարդանանց հաւատամարտին հրեղէն ոգին հանդիսացող, ներշնչող, յուսադրող, քաջալերող ու իմացեալ մահէն կեանքի՝ առաջնորդող հայ եկեղեցականութիւնը, առաջնորդութեամբ Յովսէփ կաթողիկոսի, Եպիսկոպոսաց ու քահանայից դասերուն, հրեղէն թելեր տուաւ Սպարապետ Կարմիր Վարդանին ու հայոց 66 հազար հաշուող անսման բանակին, որոնք Տղմուտ գետի ափերուն արիաբար դիմադրեցին պարսից Մուշկան Նիւսալավուրտ զօրավարի 300 հազար հաշուող բանակին ու Մատեան Գունդին:

Յայց. Առաքելական եկեղեցին Ս. Ղեւոնդեանց եւ Ս. Վարդանանց Չօրավարաց հաւատամարտի անմահ յիշատակը ամէն տարի հանդիսաւորապէս կը տօնախմբէ եկեղեցական արարողութիւններով, պատարագով, ժողովրդային ձեռնարկներով եւ աշակերտական հանդիսութիւններով:

**ՅՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՄԱԳՈՒՄԱՐ**

Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից Տօնին, որ տօնն է նաեւ Յայ Քահանայութեան, Ազգային Առաջնորդարանը տարիներու աւանդութեան համաձայն, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութեամբ, եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն՝ հոգեւորականաց համագումար կը կազմակերպէ, եկեղեցական արարողութիւն, նախատօնակ կը կատարէ եւ Ս. Պատարագ կը մատուցանէ, հոգեւոր խորհրդածութեան, լսարանային պահեր եւ դաստիարակչական բնոյթի դասախօսութիւններու կը ձեռնարկէ: Իսկ ամէն երկու տարին անգամ մը, հոգեւորականաց այս համագումարը կը համախմբէ Յիւսիսային Ամերիկայի մեր

երեք թեմերու Առաջնորդներն ու հոգեւորականները: Միացեալ համագումարը հերթաբար կը հիւրընկալուի երեք թեմերէն մէկուն կողմէ:

Այս տարի, համագումարը տեղի պիտի ունենայ մեր թեմին մէջ, գլխաւորութեամբ երեք թեմակալ Առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի (Արեւելեան թեմ), Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի (Քանաւոյի թեմ) եւ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի (Արեւմտեան թեմ), եւ հիւրընկալութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր եւ Կրօնական Ժողովին, մասնակցութեամբ երեք թեմերու հոգեւորականաց դասերուն:

Ս. Ղեւոնդեանց Զահանայից յիշատակին նուիրուած հոգեւորականաց եռօրեայ համագումարը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Փետրուար 12էն Զորեքշաբթի 14 Փետրուար 2007, Օրէնճ Բառնթիի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: Համագումարի բնաբանն է **«Նախանձախնդրութիւն»** (Սաղմոս 69: 9, Յովհաննէս 2:17), եւ պիտի ընդգրկէ օրակարգի հետեւեալ սիրւերն եւ հարցերը:

ա.- Առաւօտեան, Արեւագալի եւ Երեկոյեան ժամերգութիւններ, հոգեւոր խորհրդածութեան պահեր, Ս. Ղեւոնդեանց Զահանայից տօնին առթիւ նախատօնակ եւ Ս. Պատարագ: Տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 13 Փետրուարի առաւօտուն, Օրէնճ Բառնթիի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ Արեւելեան թեմի Առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Անուշաւան Եպսկ. Դանիէլեան:

բ.- Հովուական, ծիսական, վարչական կեանքէ բխած մտահոգութիւններ եւ ընդհանրական հարցերու քննարկում:

գ.- Կիրակնօրեայ վարժարաններու ուսումնական ծրագրի եւ ուղեցոյցի քննարկում:

դ.- Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հետ (2-3 Դեկտ.) կայացած գրոյց երիտասարդութեան հանդիպումին՝ «Քու Եկեղեցիդ, Ապագադ, Մասնակցե՛» արծարծուած սիրւերու եւ առաջադրանքներու լոյսին տակ Հայ Եկեղեցւոյ վերագարթօնքին նպաստող անհրաժեշտ ազդակներու (հոգեւոր-կրթական-կազմակերպչական) քննարկում:

ե.- Քրիստոնէական Դաստիարակութեան ծիրին մէջ, միջ-թեմական հոգեւոր, կազմակերպչական, հրատարակչական, փոխադարձ հարստացման նպաստող ծրագիրներու եւ աշխատանքներու քննարկում:

զ.- Հոգեւոր հարստացման նպաստող դասախօսութիւններ եւ զեկոյցներ:

է.- Տեառնընդառաջի տօնին առիթով, նախատօնակի երեկոյեան ժամերգութիւն եւ Անդաստան-խարոյկահանդէս, նախագահութեամբ երեք թեմակալ Առաջնորդներուն եւ մասնակցութեամբ երեք թեմերու հոգեւորականաց դասերուն, հաւատացեալ ժողովուրդին եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւառներուն: Տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 13 Փետրուարի երեկոյեան ժամը 7ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Պիտի քարոզէ Քանաւոյի թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեան:

ը.- Այցելութիւն Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շէնք, Զորեքշաբթի, 14 Փետրուարին. առաւօտեան ժամերգութիւն Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ, ապա նաեւ այցելութիւն ազգային Վ. եւ Ա. Շամլեան վարժարան, ուր նախատեսուած է աշակերտական տօնախմբութիւն, նուիրուած Ս. Վարդանանց հերոսամարտին:

Վստահ ենք, որ մեր հաւատացեալ ժողովուրդը խուռներամ ներկայ պիտի ըլլայ եկեղեցական արարողութեանց, միասնաբար աղօթք բարձրացնելու Ս. Ղեւոնդեանց ու Վարդանանց նահատակներու յիշատակին ու վերանորոգելու անոնց պատգամին հաւատարմութեան ուխտը:

## **WESTERN PRELACY TO HOST GHEVONTIANTS JOINT CLERGY CONFERENCE**

**WITH THE PARTICIPATION OF CLERGY FROM THE  
EASTERN PRELACY, WESTERN PRELACY, AND THE PRELACY OF CANADA**

Each year during the Feast of St. Ghevont, which is also a celebration of clergymen, the Western Prelacy organizes a clergy conference and church services under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of the clergy order. Every two years, a joint clergy conference takes place with the participation of the Prelates and clergy from our three Prelacies of North America.

This year, the Prelate and Religious Council will host the conference which is being held under the auspices of H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern U.S.A., H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada, and H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate of the Western U.S.A.

The three-day conference, with the theme “Zeal”, will be held at Forty Martyrs Church in Orange County, from Monday, February 12, to Wednesday, February 14, 2007, with the following agenda.

a. Morning and evening services, spiritual reflections, and Divine Liturgy on the Feast of St. Ghevont on Monday, February 13, at Forty Martyrs Church in Orange Country. H.G. Bishop Anoushavan Tanielian, Vicar General of the Eastern Prelacy, will conduct Liturgy and deliver the sermon.

b. Analysis of pastoral, parish, and administrative concerns.

c. Analysis of Sunday Schools’ curriculum.

d. Discussion of topics raised at the youth gathering with H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, from December 2-3, 2006, titled “Your Church, Your Future, Engage”.

e. Analysis of inter-Prelacy spiritual programs and publications for the enrichment of the three Prelacies.

f. Spiritual enrichment lectures and discussions.

g. Holy Mass and bonfire on the Feast of the Presentation of the Lord to the Temple on Tuesday, February 13, at 7:00 p.m., at St. Mary’s Church in Glendale. Under the auspices of the three Prelates and with the participation of clergy from the three Prelacies and Homenetmen scouts. H.E. Archbishop Khajag Hagopian will deliver the sermon.

h. Visit to the new Prelacy building and morning services at St. Drtad and St. Ashkhen Chapel on Wednesday, February 14, as well as a visit to V & A Chamlian School where a program will take place celebrating Vartanants.

We invite our faithful parishioners to participate in the aforementioned church services and commemorate our martyrs St. Ghevont and St. Vartan.